ՄԵ՛ՆՔ ԵՆՔ
ՄԵՐ ՍԱՐԵՐԸ
Զարգացման
գործակալություն

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«ՄԵՆՔ ԵՆՔ ՄԵՐ ՍԱՐԵՐԸ» ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ

Հունվար – Հունիս
2025



ՄԵ՛ՆՔ ԵՆՔ
ՄԵՐ ՍԱՐԵՐԸ
Զարգացման
գործակալություն

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ռուբեն Վարդանյանի և նրա գործընկերների կողմից 2022 թվականի վերջին հիմնադրված «Մենք ենք մեր սարերը» զարգացման գործակալությունը իրականացնում է Արցախից բռնի տեղահանված մարդկանց աջակցության և Սյունիքի զարգացման ծրագրեր: **2022–2024** թվականներին կազմակերպությունը իրականացրել է շուրջ **40 ծրագիր՝** ընդհանուր մոտ **2.5 մլն ԱՄՆ դոլար արժողությամբ**, որոնք ազդել են ավելի քան **80 000 մարդու կյանքի վրա**: Դրանց մասին մանրամասն հաշվետվությունները հասանելի են հետևյալ **հղումով**:

2023 թ. սեպտեմբերի 27-ին, Արցախի բնակչության զանգվածային տեղահանման ժամանակ, գործակալության հիմնադիր **Ռուբեն Վարդանյանը** առևանգվել է ադրբեջանական ուժային կառույցների կողմից և **մինչ այժմ ապօրինաբար պահվում է Բաքվում**: Հավատարիմ մնալով մարդասիրական սկզբունքներին՝ նա բանտից պնդել է շարունակել բարեգործական գործունեությունը՝ ի նպաստ Արցախի ժողովրդի:

2023 թ. հոկտեմբերից սկսած՝ «Մենք ենք մեր սարերը» գործակալությունն աջակցում է բռնի տեղահանված ընտանիքներին՝ օգնելու հաղթահարել հոգեկան տրավման, հարմարվել նոր պայմաններին, ամրապնդել սոցիալական կապերը և հասնել տնտեսական կայունության: Կազմակերպությունը նաև ստեղծում է հարթակներ Հայաստանում տեղահանվածների մարդկային ներուժը բացահայտելու նպատակով:

2025 թ. հունվարից հունիս ընկած ժամանակահատվածում գործակալությունը կյանքի է կոչել ծրագրեր և նախաձեռնություններ՝ ընդհանուր ավելի քան **188 000 ԱՄՆ** դոլար արժողությամբ, ինչն ազդեցություն է թողել շուրջ **8 500** մարդու կյանքի վրա Հայաստանի տարբեր մարզերում:

Ստորև ներկայացվում է իրականացված նախաձեռնությունների ցանկը՝ ծախսերի ծավալով, աշխարհագրությամբ և շահառուների թվով:

ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԾՐԱԳՐԵՐ

«ԹԵՎԵՐ»՝ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ ԱՐՑԱԽԻՑ ԲՌՆԻ ՏԵՂԱՀԱՆՎԱԾ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԵՎ ՆՐԱՆՑ ԾՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

«Թևեր ստանալու ամենապարզ միջոցը՝ թևեր պարգևել նրանց, ով դրա կարիքն ունի»

Համատեքստ

2023 թ. սեպտեմբերին տեղի ունեցած ողբերգական իրադարձություններից հետո ավելի քան **120 000 արցախցիներ** ստիպված եղան լքել իրենց հայրենիքը: Նրանց թվում կար ավելի քան **30 000 երեխա**՝ կտրված իրենց տնից ու հայտնված կյանքի ծանր ու անորոշ պայմաններում:

Վերջին հինգ տարիներին այս երեխաները ապրել են պատերազմ, շատ ամիսներ տևած շրջափակում, բռնի տեղահանում և՝ հայրենիքում վերջին ժամերին՝ պայթյունի ողբերգություն, որը հարյուրավոր կյանքեր խլեց: Շատերը կորցրել են հարազատներին, նրանց սովորական աշխարհը փլուզվել է հիմքից: Այդ հոգեկան վերքերը խոր հետքեր են թողել նրանց սրտերում և հոգիներում արտացոլվելով լուռ ցավի և անհանգստության մեջ:

Տեսնելով տրավմայի կործանարար ազդեցությունը երեխաների և ընտանիքների վրա, որոնցից շատերը հուզականորեն փակվել էին, «Մենք ենք մեր սարերը» զարգացման գործակալությունը ձևակերպեց իր համար հստակ առաքելություն՝ **«թևեր պարգևել»** որքան հնարավոր է շատ երեխաների և ծնողների՝ Արցախից:

Այս նպատակով **2023 թ. նոյեմբերին մեկնարկեց «Թևեր» վերականգնողական ծրագիրը**՝ եռամսյա հոգեբանական և սոցիալական աջակցության նախաձեռնություն՝ ուղղված բռնի տեղահանված ընտանիքներին: Ծրագիրը միտված է ոչ միայն սթրեսի նվազեցմանը և տրավմայի հաղթահարմանը, այլև արժանապատվության, անվտանգության, վստահության և պատկանելության զգացողության վերականգնմանը՝ թե երեխաների, թե նրանց ծնողների համար:

Ակնկալվող արդյունք

Մեր նպատակն է՝ կանխել տրավմայի փոխանցումը հաջորդ սերունդներին: Ժամանակին և որակյալ աջակցություն ստացած երեխաներն, ավելի հավանական է, որ կաճեն որպես հոգեբանորեն կայուն մեծահասակներ՝ ընդհատելով ցավի շրջանառությունը իրենց ընտանիքներում և համայնքներում:

«Թևեր» ծրագիրը պարզապես արձագանք չէ ճգնաժամին, այլ ներդրում է ամբողջ սերնդի հոգեբանական ապագայի մեջ:

2025 թ. հունվար-հունիս ամիսներին ծրագրին մասնակցել է **255 երեխա և 155 ծնող:**





Արդյունքներ (2025թ. հունվար-հունիս)

- **255 երեխա** մասնակցել է եռամսյա վերականգնողական ծրագրին (տես գծապատկերը);
- **155 ծնող** ներգրավվել է զուգահեռ անցկացվող միջոցառումներին, որոնք ուղղված են ընտանիքների կայունության ամրապնդմանը;
- Ծրագիրը գործել է Հայաստանի **հինգ համայնքներում** ապահովելով լայն ընդգրկում և ներառականություն;
- Ծրագրի ճկունությունն ու մասշտաբավարման հնարավորությունը ապահովվել է «Սատար Արցախին» միության (Ֆրանսիա), «Saint Sarkis Charity Trust» բարեգործական հիմնադրամի (Մեծ Բրիտանիա) և մասնավոր նվիրատուների աջակցությամբ:



Մեթոդիկա և մոտեցում

Ծրագրի հիմնական ուժը նրա համալիր մոտեցումն է՝ այն միավորում է վերականգնման հոգեբանական, ֆիզիկական, մտավոր և սոցիալական ասպեկտները: Հաշվետու ժամանակահատվածում մենք ավելացրեցինք կարևոր բաղադրիչ՝ այն համայնքների տեղացի երեխաների մասնակցությունը, որտեղ իրականացվում է ծրագիրը: Այս որոշումը ամրապնդեց ինտեգրացիան, օգնեց հաղթահարել խոչընդոտները և նպաստեց համերաշխ համայնքի ձևավորմանը: Համատեղ պարապմունքները օգնեցին ստեղծել փոխըմբռնման, կարեկցանքի և վստահության տարածք տեղահանված երեխաների և նրանց նոր հարևանների միջև:

Հիմնական գործընկերներ

Ծրագրի իրականացումը հնարավոր դարձավ հոգեկան առողջության ոլորտի մասնագետների և հուսալի տեղական կազմակերպությունների հետ համագործակցության շնորհիվ: Յուրաքանչյուր մարզում մենք աշխատեցինք իրենց գործին նվիրված մասնագետների հետ, որոնք կիրառում էին բազմազան մեթոդներ՝ հիմնված տրավմային տեղեկացված մոտեցման վրա՝ պատմավարություն (storytelling), արտահայտչական արվեստ, դրամաթերապիա, ավազային թերապիա, հիպոթերապիա, դիմակների պատրաստում, քանդակում, կոլլաժներ, մանդալաներ, թելերով նկարչություն և շատ այլ բաներ:

Արդյունքների գնահատում

Յուրաքանչյուր մասնակցի հետ կատարվում է գնահատում՝ ծրագրի մեկնարկից առաջ և վերջում: Օգտագործվում է ցուցանիշների համակարգ, որոնցից հիմնականներն են մասնակիցների մոտ անհանգստության, ինչպես նաև նոր միջավայրում հարմարվելու դժվարությունների կրճատումը:



Կ. Ա., «Թևեր – Երևան» ծրագրի մասնակից երեխաների մայր

«Իմ երեխաները մասնակցեցին «Թևեր» ծրագրին, որը կազմակերպել էր «Մենք ենք մեր սարերը» գործակալությունը: Նրանք մեծ հաճույքով էին գնում այդ հանդիպումներին, և ես նույնպես շատ գոհ եմ՝ թե՛ ծրագրի բովանդակությունից, թե՛ դրա արդյունքներից:

Աջակցությունը տեղի էր ունենում երկու ուղղությամբ՝ ֆիզիկական և հոգեբանական: Իմ երկու երեխաներն էլ մասնակցում էին լողի պարապմունքների՝ Ֆուտբոլի ակադեմիայում: Մթնոլորտը շատ լավ էր, մարզիչները՝ ուշադիր և բարի: Նրանք բացատրում էին ամեն ինչ համբերատար: Երեք ամսվա ընթացքում իմ երեխաները սովորեցին լողալ՝ սա արդեն մեծ արդյունք է:

Հոգեբանական աջակցությունն իրականացվում էր «Ինտրա» թիմի կողմից: Շնորհակալություն եմ հայտնում մասնագետներին՝ հատկապես իմ փոքր որդու հետ տարված աշխատանքի համար: 2023 թվականից հետո նրա համար շատ ծանր էր: Նա ներփակվել էր, դժվարությամբ էր դպրոց գնում, չէր ուզում տնից դուրս գալ: Նույնիսկ բակ իջնելը հնարավոր էր միայն երկար համոզելուց հետո և միայն մեր ուղեկցությամբ:

Հիմա նա իրեն ավելի լավ է զգում: Թերապիայի և հոգեբանների հետ հանդիպումների շնորհիվ նա սկսել է շփվել, ընկերներ է գտել, ավելի հանգիստ է գնում դպրոց: Սա մեզ համար շատ կարևոր է: Հասկանում եմ մենակ չէի կարող հաղթահարել:

Շնորհակալություն եմ հայտնում «Թևեր» ծրագրին և ամբողջ «Ինտրա» թիմին՝ այս դժվար շրջանը մեզ հետ անցնելու համար»:



Լ.Ա., «Թևեր – Երևան» ծրագրի մասնակցի մայր

«Իմ երեխան՝ 13 տարեկան, մեծ հետաքրքրությամբ մասնակցեց «Թևեր» ծրագրին: Շատ հավանեց թե՛ սպորտային, թե՛ հոգեբանական պարապմունքները:

Մեր երեխաների համար հաճախ դժվար է հարմարվել նոր միջավայրին, հատկապես՝ շփման առումով: Բնական է, որ իրենք ձգտում են դեպի նրանց, ովքեր համապատասխան փորձ ունեն՝ սովորաբար դա լինում են այլ արցախցի երեխաներ: Օրինակ՝ իմ երեխան շատ մտերիմ է իր համայնքի երեխաների հետ: Բայց հիմա մենք ապրում ենք Հայաստանում, և կարևոր է, որ երեխաները իրենց զգան մեծ շրջապատի մաս՝ շփվեն և ընկերություն անեն բոլոր հասակակիցների հետ:

Շատ օգնեց դրամաթերապիան: Այդ պարապմունքների ժամանակ երեխաները սովորում էին արտահայտել իրենց զգացմունքները՝ չփակվել ներսում: Դա տեսանելի արդյունք տվեց՝ իմ երեխան դարձավ ավելի բաց շփման մեջ: Դա հատկապես զգացի այսօր՝ նրանց ելույթին նայելով: Երեխաները դարձել էին ավելի ազատ, ժպտում էին, ընկերացել էին:

Այս ծրագիրը օգնեց ոչ միայն երեխաներին, այլև մեզ՝ արցախցի մայրերին: Մենք էլ իրար ավելի մոտ դարձանք:

Հուսով եմ, որ «Թևեր» ծրագիրը շարունակվելու է: Նման աջակցությունը մեզ իսկապես շատ պետք է»:

Ծրագրի միջազգային ճանաչում

2025 թ. առաջին կիսամյակում «Թևեր» ծրագիրը հայտնվեց միջազգային գործընկերների ուշադրության կենտրոնում: Մարտին «Մենք ենք մեր սարերը» գործակալությունն ընդունեց Մարսելի քաղաքապետարանի պատվիրակությանը՝ գլխավորությամբ քաղաքապետի առաջին տեղակալ, մասնագիտությամբ բժիշկ՝ տիկին Միշել Ռուբիրոլայի, որն Հայաստան էր ժամանել պաշտոնական այցով: Ֆրանսիական պատվիրակությունն այցելեց Երևանի «Ինտրա» հոգեկան առողջության կենտրոն, որտեղ ծանոթացավ «Թևեր» ծրագրի իրականացման ընթացքին՝ «Սատար Արցախին» միության աջակցությամբ: Հյուրերը ներկա գտնվեցին արտթերապիայի և դրամաթերապիայի սեանսներին, զրուցեցին ծրագրի մասնակից երեխաների հետ և հանդիպեցին ծնողներին՝ լսելու նրանց անձնական պատմությունները: ***«Խորապես հուզված եմ՝ տեսնելով ամենը, ինչ արվում է այստեղ՝ երեխաներին ու նրանց ընտանիքներին օգնելու հաղթահարել տրավման, – նշել է Միշել Ռուբիրոլան: – Մենք կիսում ենք ձեր ցավը և հիանում ենք ձեր ուժով՝ կորուստներից հետո վերականգնվելու մեջ»:*** Ծրագրում ընդգրկված ծնողները կիսվել են, թե որքան կարևոր է դարձել այս նախաձեռնությունը իրենց ընտանիքների համար: Սյուզաննա Բաղդասարյան, մասնակցի մայր - ***«Մեր երեխաները կորցրել են տուն, ընկերներ և իրենց ծանոթ աշխարհը: «Թևեր» ծրագիրն օգնում է նրանց նորից ժպտալ և երազել: Մենք շնորհակալ ենք, որ գոնե հայոց հողում հնարավորություն ունենք կյանքը վերաիմաստավորելու: Մեր երեխաների աչքերում նորից լույս կա՝ և դա ամենակարևորն է»:***

«Մեր նպատակը ոչ միայն տրավմայի հետևանքները մեղմելն է, այլև այս ընտանիքներին նոր կյանքի հիմքեր տալը: Այս այցը կարևոր է ոչ միայն որպես համերաշխության դրսևորում, այլև որպես հաստատում այն իրողության՝ որ Արցախի ժողովրդի խնդիրները դա մարտահրավեր է ողջ մարդկության համար»:

Գրիգորի Մարտիրոսյան,
գործակալության տնօրեն

2025 թ. գարնանը **«Սատար Արցախին»** միության ներկայացուցիչներն այցելեցին Հայաստան աշխատանքային այցով: Պատվիրակության անդամները եղան Գյումրիում, Երևանում և Տաթևում՝ հանդիպելով ծրագրի շահառու երեխաներին և ծնողներին: Նրանք նաև քննարկեցին ծրագրի մեթոդաբանությունը մասնագետների հետ: Սա հնարավորություն տվեց ավելի խորապես հասկանալու տեղահանված ընտանիքների ներկայիս կարիքները, ամրապնդելու գործընկերությունը և համապատասխանեցնելու ծրագիրը իրական մարտահրավերներին:

Հիմնական մարտահրավերները և արձագանքման քայլերը

- **Զբաղվածության և կեցության հետ կապված դժվարությունները խթանում են նոր միգրացիոն ալիքներ**: Մենք զարգացնում ենք համալիր ծրագրեր, որոնք օգնում են ընտանիքներին ադապտացվել նոր պայմաններին և ներգրավել դեռահասներին տնտեսական գործունեության մեջ:
- **Ժամանակին հոգեբանական աջակցության բացակայությունը հանգեցնում է տրավմաների կուտակմանը:** Մենք հայտնաբերում ենք նման երեխաներին և առաջարկում լրացուցիչ անհատական սեանսներ:
- **Գլոբալ մարտահրավերների ֆոնին դոնորական աջակցության օբյեկտիվ սահմանափակումները բարդացնում են նոր ռեսուրսների ներգրավումը:** Մենք դիվերսիֆիկացնում ենք ֆինանսավորման աղբյուրները՝ ընդլայնելով գործընկերների շրջանակը ինչպես Հայաստանում, այնպես էլ արտերկրում ներառյալ մասնավոր նվիրատուներ, միջազգային կազմակերպություններ և դրամաշնորհային հիմնադրամներ:
- **Տեղահանված և տեղական բնակչության միջև սոցիալական լարվածության ու ինտեգրման խնդիրների աճ:** Այս միտումների հաղթահարման համար ծրագիրը հատուկ ներառում է նաև տեղացի երեխաներին:

Հայացք ապագային

Տաթևում և Կապանում ընթացող «Թևեր» ծրագրի ներկայիս փուլերը ավարտվում են 2025 թվականի օգոստոսին: Այնուհետև կանցկացվի ձեռք բերված արդյունքների գնահատում, կամփոփվեն եզրակացությունները, և կմեկնարկի ծրագրի հաջորդ փուլի նախագծումը: Մեր նպատակը մնում է անփոփոխ՝ տեղահանված ընտանիքներին ուղեկցել հոգատարությամբ, ուշադրությամբ և ստեղծագործական մոտեցմամբ՝ դեպի վերականգնման ճանապարհ:

Խորին շնորհակալություն ենք հայտնում «Սատար Արցախին» միությանը (Ֆրանսիա), «Saint Sarkis Charity Trust»-ին (Մեծ Բրիտանիա), ինչպես նաև բոլոր մեր բարեկամներին և գործընկերներին, ովքեր հավատում են հոգատարության և վերականգնման ուժին: Նրանց աջակցությամբ Արցախի երեխաներն ու ընտանիքները ստանում են անհրաժեշտ օգնություն և ապագայի հանդեպ հույս:

«ԹԵՎԵՐ՝ ԲՈԼՈՐԻՆ». ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՏԱԹԵՎԻ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԱՊԱԳԱՅԻ ՇԱՐԺԻՉ ՈՒԺ

«ԹԵՎԵՐ՝ ԲՈԼՈՐԻՆ» ծրագիրը մեկնարկել է 2025 թ. մարտին, հավակնոտ նպատակով. երկակի մարտահրավերը՝ արցախցիների բռնի տեղահանումը և Հայաստանի գյուղական շրջանների տնտեսական դժվարությունները վերածել կայուն զարգացման, արժանապատվության վերականգնման և ձեռնարկատիրության զարգացման հնարավորությունների:

Հ. Հովնանյան ընտանեկան հիմնադրամի աջակցությամբ և **Ինոնբիզ ՀԿ-ի** հետ համագործակցությամբ, մենք իրականացնում ենք ընտանիքներին ուղղված ընդգրկուն ձեռնարկատիրական ծրագիր՝ Սյունիքի մարզի սրտում՝ Տաթևի տարածքում: Տեղահանված և տեղացի բնակիչների, հատկապես երիտասարդության՝ որպես փոփոխությունների դերակատարների ներգրավմամբ, ծրագիրը միտված է երկարաժամկետ տնտեսական կայունության և սոցիալական համախմբման խթանմանը:

Այս զեկույցը ներկայացնում է ծրագրի առաջին չորս ամիսների հիմնական ձեռքբերումները, համայնքի արձագանքը և ծրագրի ազդեցությունը, ինչպես նաև հաջորդ կիսամյակի գերակայությունները:

Գլխավոր նպատակները

1. **Ձեռնարկատիրական հմտությունների զարգացում՝** 6-ամսյա դասընթաց՝ փոքր բիզնեսի հիմունքների, մարքեթինգի, բյուջետավորման և իրավական ասպեկտների վերաբերյալ:
2. **Երիտասարդական առաջնորդության զարգացում՝** պատանիների ներգրավում ընտանեկան նախաձեռնություններում՝ որպես համահեղինակներ և առաջնորդներ, շեշտը դնելով նորարարության և նախաձեռնողականության վրա:
3. **Տնտեսական ամրապնդում՝** կրթաթոշակների և մեկնարկային դրամաշնորհների տրամադրում իրական բիզնեսների մեկնարկի համար:
4. **Համայնքների ինտեգրում՝** միջոցառումների կազմակերպում և տեղացի ու տեղահանված ընտանիքների համատեղ ուսուցման ու փոխգործակցության հարթակների ստեղծում:
5. **Կայունություն և տեղական կադրերի զարգացում՝** տեղացի մարզիչների պատրաստում՝ ծրագրի երկարաժամկետ ազդեցության ապահովման նպատակով:

Վստահության և ներգրավվածության ձևավորում

«ԹԵՎԵՐ՝ ԲՈԼՈՐԻՆ» ծրագրի թիմի առաջին քայլը եղավ ամուր կապի ստեղծումը տեղական համայնքի հետ: Դա պարզապես մասնակիցների հավաքագրում չէր, այլ՝ լսելու, հասկանալու և համատեղ աշխատելու ձգտում:

Մենք մեկնարկեցինք տեղական առաջնորդների հետ խորհրդակցություններով՝ ներառյալ Տաթև համայնքի ղեկավարի տեղակալ Մարատ Գերասիմյանի, Տաթևի համայնքային կենտրոնի ակտիվ երիտասարդության և «ՏԱԹևեր» ճոպանուղու ղեկավարության: Այս հանդիպումները համաձայնեցված էին համայնքի հնգամյա զարգացման պլանի և «Տաթևի վերածնունդ» ծրագրի հետազոտությունների հետ:

Բնակչության տեղեկացվածության բարձրացման նպատակով անցկացվել է տեղեկատվական արշավ գործընկերների սոցմեդիայի միջոցով: Մարտ-ապրիլ ամիսներին Տաթևի համայնքային կենտրոնում տեղի ունեցավ երկու հանդիպում, որոնց ժամանակ տեղացի և տեղահանված ընտանիքները ծանոթացան ծրագրի նպատակներին և մասնակցության պայմաններին:

Արձագանքը գերազանցեց սպասելիքները. ավելի քան 50 ընտանիք դիմեց, դիմումների ընդունման ժամկետը երկարաձգվեց՝ ավելի շատ հետաքրքրվածներին ներգրավելու համար:

Մասնակիցները և ժողովրդագրությունը

Հուլիսի դրությամբ ծրագիրը լիովին ներգրավել էր 66 մարդ, որից 58%-ը կանայք, ինչը ընդգծում է **«ԹԵՎԵՐ՝ ԲՈԼՈՐԻՆ»** ծրագրի ներառական բնույթը: Մասնակիցները ներկայացնում են Տաթևի համայնքի չորս գյուղեր՝ Ծինուհայր, Խոտ, Հալիձոր, Սվարանց, ինչպես նաև Գորիս քաղաքը:

Ծրագիրը հիմնված է սերունդների միջև փոխգործակցության վրա.

- **61%** մասնակիցներ՝ մինչև 30 տարեկան,
- **30%՝** 30–45 տարեկան,
- **9%՝** 45-ից բարձր:

Երիտասարդական եռանդի և հասուն փորձի այդպիսի համադրությունը ստեղծում է բարենպաստ միջավայր ուսուցման և համատեղ զարգացման համար:

Ուսուցողական գործընթացի մեկնարկ

Բոլոր մասնակիցները միացել են **«Բյուր»** առցանց հարթակին և սկսել ուսուցումը **«Գաղափարների գեներացիա»** մոդուլով: Քանի որ շատերը, հատկապես՝ ավագ սերնդից, չունեին առցանց ուսուցման փորձ, թիմը անցկացրեց նախապատրաստական դասընթացներ և անհատական խորհրդատվություններ:

Նյութերը հարմարեցվել են գյուղական համատեքստին. գրվել են հասանելի լեզվով, հագեցած առօրյա կյանքի օրինակներով, վարժությունները պարզեցված և տեղայնացված են: Հաջորդ փուլում նախատեսվում է ներդնել թվային մարքեթինգի, ֆինանսական գրագիտության, ֆոնդհայթայթման և շրջանաձև տնտեսության մոդուլներ:

Առաջին մոդուլը հաջողությամբ ավարտած մասնակիցները հրավիրվել են մենթորական սեսիայի՝ ստանալու անհատական արձագանք իրենց բիզնես գաղափարների վերաբերյալ և ամրապնդելու սեփական ուժերի նկատմամբ վստահությունը:

Հուզական և հոգեբանական վերականգնման ներդրումներ

«ԹԵՎԵՐ՝ ԲՈԼՈՐԻՆ» ծրագրի հիմնական առանձնահատկություններից մեկն այն համոզումն է, որ կայուն զարգացումը հնարավոր չէ առանց հոգեբանական կայունության: Ծատ տեղահանված ընտանիքներ բախվում են տրավմայի, կորստի և քրոնիկ սթրեսի: Մասնակիցների համար կարևոր հենարան է դարձել մեր արդեն գործող «Թևեր» վերականգնողական ծրագիրը, որն իրականացվում է նույն բնակավայրում Տաթև համայնքի Հալիձոր գյուղում: Այն օգնում է վերականգնել ներքին ռեսուրսները, ինքնավստահությունը և արժանապատվության զգացումը: Հատկապես զգալի է երիտասարդության դերը, նրանք հաճախ դառնում են ընտանիքում փոփոխությունների շարժիչ ուժ՝ ոգեշնչելով ծնողներին, աջակցելով նրանց տեխնիկապես և հուզականորեն:

Ծրագրի պաշտոնական մեկնարկը և համատեղ տեսլականի սեսիա

Ապրիլին տեղի ունեցավ մեկնարկային ֆորում, որը համախմբեց տեղական բնակիչներին, ղեկավարներին և գործընկերներին:

Մարատ Գերասիմյանը ողջունեց մասնակիցներին. ***«Զբոսաշրջության զարգացումը ոչ միայն հնարավորություն է, այլև մեր շանսը՝ նոր կյանք ներշնչելու Տաթևի տարածաշրջանին: Նման նախաձեռնությունները, ինչպիսին «ԹԵՎԵՐ՝ ԲՈԼՈՐԻՆ» ծրագիրն է, օգնում են միավորել ուժերը և երիտասարդների ու ընտանիքների հետ միասին կառուցել կայուն ապագա՝ հավատով դեպի մեր տարածաշրջանը»:***

Ծրագրի համակարգող Սոնա Հովհաննիսյանը ներկայացրեց գյուղական ձեռնարկատիրության հաջողված օրինակներ, իսկ Իննոբիզ ՀԿ տնօրեն Նաիրա Մարգարյանը՝ «Մեկ գյուղ – մեկ ապրանք» մոդելը՝ որպես կայուն աճի գործիք:

Հանդիպման կուլմինացիան եղավ ինտերակտիվ սեսիան. մասնակիցները քարտեզագրեցին իրենց համայնքի ռեսուրսները և «տեղափոխվեցին» 2030 թվական՝ պատմելով իրենց ապագա բիզնեսների և տարածաշրջանի կյանքի մասին: Սա օգնեց ձևավորել համատեղ տեսլական և ամրապնդել համատեղ ջանքերի հանդեպ հավատը:

Խոչընդոտների հաղթահարում

Ինչպես սպասվում էր, ուղին հեշտ չէր: Ավագ մասնակիցների համար բարդ էր հարմարվել առցանց ձևաչափին: Թիմը արագ արձագանքեց՝ ապահովելով անհատական ուղեկցություն, երիտասարդների աջակցություն և շարունակական խրախուսանք:

Լրացուցիչ դժվարություն էր մասնակիցների աշխարհագրական տարածվածությունը: Հավասար հասանելիություն ապահովելու համար կազմակերպվեց փոխադրում՝ առկա միջոցառումներին մասնակցության համար:

Հայացք՝ ապագային

2025 թ. երկրորդ կիսամյակում ծրագիրը կուղղվի գործնական գործունեության և բիզնես գաղափարների իրագործման վրա: Նախատեսված են հետևյալ քայլերը.

- **Ձեռնարկատիրության երեք հիմնական մոդուլների ավարտում,**
- **Նախնական բիզնես պլանների մշակում և ներկայացում,**
- **200 ԱՄՆ դոլար կրթաթոշակների տրամադրում՝ գաղափարների փորձարկման համար,**
- **Մենթորական աջակցության շարունակություն,**
- **Առաջնորդության դասընթացներ դեռահասների համար,**
- **Համայնքների համախմբմանն ուղղված ևս երկու միջոցառման անցկացում,**
- **Հինգ տեղական մարզիչների (ֆասիլիտատորների) պատրաստման մեկնարկ,**
- **Եզրափակիչ փիչինգ. 5 լավագույն նախագծերը կստանան մեկնարկային դրամաշնորհներ՝ յուրաքանչյուրն 5 000 ԱՄՆ դոլար:**

Առաջին չորս ամիսների ընթացքում **«ԹԵՎԵՐ՝ ԲՈԼՈՐԻՆ»** ծրագիրը դարձավ ավելին, քան պարզապես նախագիծ. այն վերածվեց շարժման: Ընտանիքները ձեռք են բերում նոր իմաստ, երազանքներ և հմտություններ: Ուսուցման, համատեղ ստեղծագործական աշխատանքի և աջակցության միջոցով նրանք ապացուցում են՝ անգամ կորուստների պայմաններում հնարավոր է վերականգնել վստահությունը, հավատը և հեռանկարը:

Խորին շնորհակալություն ենք հայտնում **Հ. Հովնանյան ընտանեկան հիմնադրամին՝** ռազմավարական և առատաձեռն մասնակցության համար: Վերջինիս ներդրման շնորհիվ Տաթևում ձևավորվում է հույսի տնտեսության նոր մոդել, որը կարող է մասշտաբավորվել նաև այլ շրջաններում:

«TATEV CAVE GARDEN». ՆՈՐ ԾՈՒԿԱ ՏԱԹԵՎՈՒՄ

«Tatev Cave Garden» ծրագիրը կարևորագույն նախաձեռնություն է, որն ուղղված է Տաթևում ժամանակակից շուկայի ստեղծմանը, որը դառնալու է ոչ միայն առևտրային հարթակ, այլև հավաքատեղի՝ ամբողջ համայնքի և նրա հյուրերի համար: Սյունիքի քարանձավային բնակավայրերի պատմությամբ ոգեշնչված ապագա շուկան միավորելու է մշակութային իմաստներ, տնտեսական հնարավորություններ և մարդկանց հանդեպ հոգատարությունը: Այստեղ տեղ կգտնեն ինչպես ֆերմերները, այնպես էլ արհեստավորները, և իրականը փնտրող ճամփորդները:

Այս ծրագիրը հիմնված է Ռուբեն Վարդանյանի տեսլականի վրա, ով առաջին օրվանից նպատակ էր դրել ոչ միայն պահպանել Տաթևը, այլև նոր զարգացում տալ նրան: **Էրիկ և Մելինա Իսրայելյանների կողմից տրամադրված 100 000 ԱՄՆ դոլար առատաձեռն նվիրատվության շնորհիվ** ծրագիրը ստացավ հզոր մեկնարկ. մշակվեցին ճարտարապետական հայեցակարգը և գլխավոր պլանը, և մենք գաղափարից անցանք կոնկրետ գործողությունների:

Արդեն իրականացված փուլերը

- Որոշվել է կառուցապատման տարածքը և կատարվել են անհրաժեշտ երկրաչափական աշխատանքներ:
- **«Պրոֆորմա»** ճարտարապետական ստուդիայի կողմից պատրաստվել է **«Քարանձավային այգի Տաթևում»** հայեցակարգը՝ ոգեշնչված Սյունիքի պատմությամբ և բնական լանդշաֆտով:
- Տաթևի համայնքապետարան է ներկայացվել ճարտարապետական-պլանավորման առաջադրանքի (ՃՊԱ) համաձայնեցման հայտը՝ որը գտնվում է քննարկման փուլում:
- Շարունակվում է նախագծա-հաշվարկային փաստաթղթավորման մշակումը:
- Ակտիվորեն շարունակվում են ֆոնդհայթայթման աշխատանքները. ծրագիրը ներկայացվել է պոտենցիալ գործընկերներին, ընթանում են բանակցություններ հետագա ֆինանսավորման վերաբերյալ:

«Այս շուկան պարզապես ենթակառուցվածքային ծրագիր չէ: Այն դառնալու է վայր, որտեղ տեղացի բնակիչներն ու հյուրերը կկարողանան հանդիպել, շփվել և զգալ իրենց որպես մեկ մեծ համայնքի մաս: "Մենք ենք մեր սարերը" նախաձեռնությունը և Ռուբեն Վարդանյանի ներդրումը մեր համայնքի առջև նոր հորիզոններ են բացում»:

Սամվել Լալայան,
Տաթևի համայնքի ղեկավար

Ինչ է նախատեսվում

2025 թ. վերջին պլանավորվում է ավարտել նախագծա-նախահաշվային փաստաթղթավորումը և նախապատրաստել շինարարական աշխատանքների առաջին փուլը: Միաժամանակ մենք պատրաստում ենք ուսուցողական ծրագրեր և ձևավորում շուկայի ապագա կառավարման մոդելը՝ հենվելով սոցիալական ձեռնարկատիրության սկզբունքների վրա: Ծրագրի կարևոր մաս է մնում Արցախից տեղահանվածներին և տեղացի բնակիչներին աջակցությունը. առաջին փուլում առևտրային տեղերը նրանց համար կտրամադրվեն անվճար:

Մենք շնորհակալ ենք բոլոր նրանց, ովքեր արդեն աջակցել են ծրագրին, և հրավիրում ենք գործընկերության բոլոր նրանց, ովքեր կիսում են մեր հավատը Տաթևի ապագայի հանդեպ: **Tatev Cave Garden-ը** ավելին է, քան շուկա: Դա ներդրում է կայուն զարգացման, զբաղվածության և տարածաշրջանի նոր ինքնության մեջ:

«ԿԵՆԱՑ ԾԱՌ» ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆ. ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹՅՈՒՆ ՏԱԹԵՎԻ ՎԱՆՔ

Ձգտելով համախմբել հանրությանը հոգևոր արժեքների շուրջ և վերականգնելով դեպի Տաթևի վանք պատմական ուխտագնացության ավանդույթը, «Մենք ենք մեր սարերը» զարգացման գործակալությունը, Հայ առաքելական եկեղեցու օրհնությամբ և հայկական բարեգործական մի շարք կազմակերպությունների հետ համագործակցությամբ, 2025 թ. մայիսի 31-ին կազմակերպեց դեպի Տաթևի վանք երկրորդ տարեկան ուխտագնացությունը: Այն շարունակությունն էր **«Կենաց ծառ»** նախաձեռնության, որը մեկնարկել էր 2024թ-ի մայիսին: Ուխտագնացությանը միացել է ավելի քան 2 000 հոգի:

Այս տարի ուխտագնացությունը կենտրոնացել է՝

- Հոգևոր և ազգային վերածննդի աջակցության, արմատների և ավանդույթների հետ կապի արժեքի գիտակցման վրա,
- Տաթևի պատմական և մշակութային ժառանգության պահպանման վրա,
- Հայ գերիների ազատ արձակմանն աջակցության վրա,
- Ռուբեն Վարդանյանի՝ Տաթևի համայնքի զարգացման նախաձեռնությունների շարունակման վրա:

Ուխտագնացության շրջանակներում տեղի ունեցավ արցախցի 7 երեխաների մկրտության արարողությունը:

Լուսինե Թովմասյան, Տաթևում մկրտված Եվայի մայր

«Վեց ամսական հղի էի, երբ լքեցինք Արցախը: Սեպտեմբերի 23-ին, երբ տեղահանվեցինք Ստեփանակերտից, էն ժամանակ դեռ չգիտեինք, որ իմ մեջ կրում եմ մի փոքրիկ սրտիկ՝ Աստծո օրհնություն... Եվան ծնվել է Սյունիքում, Գորիս քաղաքում:

Անչափ շնորհակալ ենք մեր սիրելի Ռուբեն Վարդանյանին: Մենք ուխտ ունենք, պիտի կատարենք: Ճիշտ է՝ շատ դժվար ճանապարհ ունենք անցնելու, միգուցե մենք չտեսնենք, բայց տա Աստված տեսնենք, մեր երեխաները տեսնեն այն լուսավոր օրը, երբ նրանք կվերադառնան մեր սրտի Արցախը:»

Մկրտության խաչերը երեխաներին նվիրել է Երևանի «Էմիլ Գրիգորյանի անվան Երևանի ոսկերչական գործարանը»:

Սուրբ Պողոս-Պետրոս տաճարում ուխտագնացության մասնակիցները միացան ընդհանուր աղոթքին, որը գլխավորում էր Սյունյաց թեմի առաջնորդ Մակար եպիսկոպոս Հակոբյանը: Աղոթքը նվիրված էր Բաքվի բանտերում պահվող հայ գերիների ազատ արձակմանը:

«Հանրային աջակցության մասնավոր մի դրսևորման ականատես ենք լինում այսօր, ինչը ոգեշնչող է: Գործընթացների մասին իրազեկումը կամ սովորական սրտացավությունը, կիսվելը հանրային տիրույթում ունի մեծ նշանակություն, և այն կարող է բազմապատկման էֆեկտով ազդել միջազգային հանրության կարևոր դերակատարների, որոշում կայացնող քաղաքական գործիչների վրա»:

Սիրանուշ Սահակյան, *«Իրավական ուղի» հասարակական կազմակերպության համահիմնադիր*

«Այսօրվա մեր ուխտագնացությունը՝ դա ճանապարհ է, որի ընթացքում մենք հիշում և աղոթում ենք բոլոր այն հայրենակիցների համար, ովքեր մինչև հիմա գտնվում են գերության մեջ, ապօրինաբար գտնվում են Բաքվի բանտերում: Առաջի հերթին ուզում եմ հիշել Ռուբեն Վարդանյանին, որովհետև իր անունն անբաժանելի է Տաթևի պատմությունից. Ռուբենը տարիներ առաջ սկսեց մի մեծ ծրագիր, որը վերահիմաստավորեց ոչ միայն Տաթևի ճարտարապետական վերածնունդը, այլև՝ հոգևոր, այլև՝ հանրային, և դա իր էությամբ հանդիսանում է շարունակություն մեկենասության ավանդույթի, որը դարերի պատմություն ունի»:

Գրիգորի Մարտիրոսյան,
«Մենք ենք մեր սարերը» զարգացման գործակալության տնօրեն

Ուխտագնացության շրջանակներում ներկայացվել է «Մեկենասների ոսկե շղթա. Տաթևի պահապանները դարերի ընթացքում» ցուցահանդեսը: Այն պատմում է Տաթևի վանքի անցած բարդ ու փորձություններով լի ճանապարհի մասին, արժևորելով Տաթևի պահապանների ավանդը՝ Սյունյաց իշխաններից մինչև ժամանակակից բարերարներ:

Ծրագրի շրջանակներում ստեղծվել է **«Արմատների պահապանների շրջան»** ճարտարապետական կոմպոզիցիան, որը խորհրդանշում է հայկական բարեգործական կազմակերպությունների ներդրումը հայ ժողովրդի՝ սերնդե-սերունդ փոխանցվող ավանդույթների և հոգևոր արժեքների պահպանման գործում:

Արմատներին վերադարձի միջոցառումը ուղեկցվել է ազգային մշակույթի ներկայացմամբ և հայկական ավանդական հարիսայի հյուրասիրությամբ:

Ուխտագնացության համակազմակերպիչներն են

- **Հայկական Բարեգործական Ընդհանուր Միությունը**
- **«Ազնավուր» հիմնադրամը**
- **«Սատար Արցախին» միությունը (Ֆրանսիա)**
- **ԴԱՐ տարածաշրջանային զարգացման և մրցունակության հիմնադրամը**
- **IDeA բարեգործական հիմնադրամը**
- **Հայ Օգնության Միությունը**
- **Հ. Հովնանյան ընտանեկան հիմնադրամը**
- **ՆԻՅՐ ԻՍԹ ՖԱՈՒՆԴԵՅՇՆ-Ի Հայաստանյան մասնաճյուղը**
- **«Օրրան» բարեգործական ՀԿ**
- **«Դասավանդիր, Հայաստան» կրթական հիմնադրամը**
- **«Թուֆենկյան» հիմնադրամը**
- **Տաթև համայնքը**

Ուխտագնացությունը պարզապես ճանապարհ չէ, այլ իմաստալից հոգևոր գործողություն: Այն խորհրդանշում է մեր ներքին մաքրագործման, մեր պատմության գիտակցման և հավատքի ամրապնդման ձգտումը: Այն միավորող գործողություն է, որը մեզ կապում է մեր նախնիների, մեր մշակույթի և ավանդույթների հետ և արտահայտում է ապագան ամուր հոգևոր ու պատմական հիմքի վրա կառուցելու մեր վճռականությունը:

Մենք սրտանց շնորհակալություն ենք հայտնում բոլոր ուխտավորներին, ովքեր միացան մեզ այս տարի և կիսեցին հավատքի, հիշողության և միասնության այս ուղին, ինչպես նաև բոլոր կազմակերպություններին և անհատներին, ովքեր աջակցեցին ուխտագնացությանը:

Հույսով ենք նայում ապագային և հավատում ենք, որ հաջորդ տարի կրկին կհամախմբվենք Տաթևի վանքի պատերի մոտ:

«ՊԱՀՊԱՆԵԼՈՎ ԱՐՑԱԽԸ». ԱՐՑԱԽԻ ՈՉ ՆՅՈՒԹԱԿԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՐԹԱԿ

Ծրագրի նպատակն է ստեղծել կենտրոնացված, վստահելի և հանրամատչելի առցանց հարթակ՝ Արցախի հարուստ ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանման, թվայնացման, ուսումնասիրման և տարածման համար: Սա պարզապես արխիվ չէ, այլ կենդանի մշակութային միջավայր, որը կապում է անցյալը, ներկան և ապագան՝ ապահովելով շարունակականությունը և արցախյան մշակութային ինքնության փոխանցումը՝ անկախ բնակության վայրից:

Ծրագիրը մեկնարկել է 2024 թ. նոյեմբերին: Առաջին փուլում իրականացվել են հետազոտական և նախապատրաստական աշխատանքներ՝ արխիվային նյութերի հավաքագրում և փաստաթղթավորում, բովանդակային բաժինների կառուցում, ինչպես նաև թվային հարթակի տեխնիկական նախագծում: Ընդհանուր առմամբ հավաքագրվել և թվային հրապարակման է պատրաստվել ավելի քան 10,000 էջ նյութ: Դրանք ներկայացվելու են վեց հիմնական բաժիններով՝

- **Բանավոր ավանդույթներ և խոսքային արտահայտություններ,**
- **Կատարողական արվեստներ,**
- **Սոցիալական պրակտիկաներ, ծեսեր և տոնակատարություններ,**
- **Բնության և տիեզերքի մասին գիտելիքներ և պրակտիկաներ,**
- **Ավանդական արհեստներ,**
- **Կենսապահովման մշակույթ:**

«Արցախի ոչ նյութական մշակույթը մեր անցյալի շունչն է՝ անշոշափելի, բայց հզոր հենարան մեր ինքնության համար: Արցախի կորստից հետո այս ժառանգությունն էլ հայտնվեց անհետացման եզրին, սակայն մենք դեռ հնարավորություն ունենք այն փրկելու: Եթե այսօր քայլեր չձեռնարկենք, վաղը արդեն կարող է ուշ լինել: Մենք շնորհակալություն ենք հայտնում Գալուստ Կիւլպէնկեան հիմնարկությանը՝ այս նախաձեռնության կարևորությունը գնահատելու և դրա իրականացմանն աջակցելու համար»:

***Նարինե Աղաբայան**, ծրագրի համակարգող*

«Էլեկտրոնային հարթակը լինելու է համահայկական տարածքի արցախյան այն անկյունը, որի առաքելությունը մի կողմից՝ կենսատարածքից կտրված Արցախի բարբառը, ազգագրական և բանահյուսական մեծարժեք ժառանգությունը պահպանելը և այն ճանաչելի դարձնելը պիտի լինի, մյուս կողմից՝ բնատարածքից զրկված արցախցիների ինքնության լիցքը և տունդարձի հնարավորության կապը նորոգ պահելը»:

Լուսինե Մարգարյան,
Էլեկտրոնային պլատֆորմի բովանդակության կառավարիչ

Ակնկալվում է, որ այս էլեկտրոնային հարթակը կդառնա Արցախի ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանման գլխավոր պահոցը, կծառայի որպես կարևոր ռեսուրս համալսարանների, դպրոցների և հետազոտական կենտրոնների համար, կօգնի Հայաստանում և սփյուռքում ապրող արցախցիներին պահպանել իրենց ինքնությունը: Հարթակը կբարձրացնի Արցախի հարուստ և բազմաշերտ մշակութային ժառանգության ճանաչելիությունը Հայաստանում և միջազգային մակարդակում՝ այն ներկայացնելով որպես համաշխարհային մշակույթի անբաժանելի մաս:

Միաժամանակ այս հարթակը լայն հնարավորություններ է բացում Արցախի մշակութային ինքնության ներկայացմանն ուղղված նորարարական գաղափարների իրականացման համար: Այն դառնում է ստեղծագործական համագործակցության տարածք, որը միավորում է տարբեր բնագավառների մասնագետների, համայնքների և կազմակերպությունների՝ մշակութային ժառանգությունը ոչ միայն պահպանելու և արդիականացնելու, այլև վերաիմաստավորելու նպատակով:

Հարթակի հետագա զարգացումը կապահովվի շահագրգիռ կողմերի համախմբման, փոխադարձ վստահության և համատեղ աշխատանքի միջոցով:

ՖՐԱՆՍԵՐԵՆ՝ ԱՐՑԱԽՑԻ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Արցախից բռնի տեղահանված երեխաների կրթությունը շարունակում է մնալ «Մենք ենք մեր սարերը» կազմակերպության ուշադրության կենտրոնում: Նրանց ուսումնական գործընթացը խաթարվել է 2020 թ. պատերազմի, բազմակի տեղահանումների, Արցախի երկարատև շրջափակման և, 2023թ.-ին Արցախից զանգվածային տեղահանման պատճառով: Այս ծանր հանգամանքները անդրադարձել են ոչ միայն երեխաների ֆիզիկական և հոգեբանական վիճակի վրա, այլև նրանց ակադեմիական առաջադիմության: Հատկապես սուր են դրսևորվել օտար լեզուների ուսուցման դժվարությունները. Հայաստան տեղահանումից հետո շատ դպրոցականներ բախվել են ծրագրային և լեզվական խոչընդոտների նոր կրթական պայմաններում: 2025 թ. մարտ-հունիս ամիսներին Երևանի Միսակ Մանուշյանի անվան թիվ 48 հիմնական դպրոցում սովորող 24 արցախցի երեխաների համար շարունակվեցին ֆրանսերենի լրացուցիչ պարապմունքները: Ծրագիրը նպատակ ուներ աջակցել այն դպրոցականներին, ովքեր բռնի տեղահանությունից հետո հայտնվել էին ֆրանսերենի խորացված ուսուցմամբ դպրոցում: Այն հնարավորություն տվեց լրացնել գիտելիքների բացը և հեշտացնել հարմարումը նոր կրթական միջավայրին:

Պարապմունքները անցկացվեցին երկու տարիքային խմբերի համար՝ 3-5-րդ և 6-9-րդ դասարանների աշակերտների:

Ուսուցիչների և ծնողների խոսքով, այս նախաձեռնությունը, որն իրականացվում է արդեն երկրորդ տարին, արդյունավետ է եղել. երեխաները ցույց են տալիս նկատելի առաջընթաց լեզուն ուսուցանելիս և ավելի ակտիվ են ինտեգրվում դպրոցական համայնքում: Լրացուցիչ դասերը ոչ միայն ամրապնդել են նրանց գիտելիքները, այլև ստեղծել են կայունության և աջակցության զգացում, ինչը հատկապես կարևոր է երեխաների հուզական վիճակի համար: Ծրագիրը իրականացվել է Սատար Արցախին միության (Ֆրանսիա) աջակցությամբ:

Մարիա Մինասյան –
Միսակ Մանուշյանի անվան թիվ 48 դպրոցի 5-րդ դասարանի աշակերտուհի

«Երբ ես Արցախից եկա Երևան, ֆրանսերեն ընդհանրապես չգիտեի, ուստի այստեղ սկսեցի զրոյից: Այս պարապմունքները ինձ շատ օգնեցին ծրագիրը յուրացնել և հետ չմնալ: Սովորեցինք ամիսների և օրերի անունները, դերանունները, բայերի խոնարհումները, ժամանակաձևերը: Ինձ շատ դուր է գալիս ֆրանսերենը: Երազում եմ գնալ Ֆրանսիա և տեսնել Էյֆելյան աշտարակը»:

Սոնա Կալենջյան, *ֆրանսերենի ուսուցչուհի.*

«Անցյալ տարի, երբ մեկնարկեցին արցախցի երեխաների համար ֆրանսերենի լրացուցիչ պարապմունքները, մենք սկսեցինք գրեթե այբուբենից՝ երեխաների մեծամասնությունը ֆրանսերեն ընդհանրապես չգիտեր: Բարեբախտաբար, արդեն առաջին տարում նրանք հաղթահարեցին այդ դժվարությունները: Իսկ այս տարի, պարապմունքները շարունակելով, երեխաները կարողացան ավելի խորացնել իրենց գիտելիքները, ինչը լավ երևում է նրանց առաջադիմությունից: Հատկապես ուրախալի է, որ երեխաները ակտիվ են, ցանկություն ունեն սովորել, և նաև իրենց աշխատանքի շնորհիվ հասել են հիանալի արդյունքների: Նրանք ուրախությամբ են գալիս այս պարապմունքներին՝ իրենց համար կարևոր է միմյանց հետ լինելը: Շատ համերաշխ խումբ է, ասես մեկ ընտանիք լինի»:

ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԱՐՑԱԽԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԵՐԱԺԻՇՏՆԵՐԻՆ

Երեխաների տաղանդների հայտնաբերումն ու աջակցությունը շարունակում են մնալ մեր գործունեության առաջնահերթ ուղղություններից մեկը:

«Մենք ենք մեր սարերը» զարգացման գործակալությունը ոգևորությամբ միացավ «Ծնվել եմ Արցախում» կրթական նախաձեռնությանը: Այս նախաձեռնության հեղինակն ու հիմնական իրականացնողը «Արվեստ 23» հասարակական կազմակերպությունն է՝ Պետական սիմֆոնիկ նվագախմբի գեղարվեստական ղեկավար և գլխավոր դիրիժոր, UNICEF-ի ազգային դեսպան Սերգեյ Սմբատյանի ղեկավարությամբ:

«Ծնվել եմ Արցախում» ծրագիրը հնգամյա համալիր կրթական նախագիծ է՝ ուղղված Արցախից բռնի տեղահանված տաղանդավոր երիտասարդ երաժիշտների մասնագիտական պատրաստությանը: Նախաձեռնությանը միանալով՝ գործակալությունը կենտրոնացրել է իր ջանքերը ծրագրի մասնակիցներին անհրաժեշտ երաժշտական գործիքներով՝ ջութակներ, թավջութակներ, կոնտրաբասներ, կլարնետներ, շեփորներ, դաշնամուրներ, ինչպես նաև համակարգչային տեխնիկա ապահովելու վրա:

«Հովարդ Կարագյոզյան» հիմնադրամի աջակցությամբ ձեռք բերվեցին և արցախցի երիտասարդ երաժիշտներին փոխանցվեցին 23 պլանշետներ:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է երաժշտական գործիքներ ձեռք բերել երիտասարդ կատարողների համար, ովքեր բազային երաժշտական կրթություն ստացել են Արցախում: Նրանցից մի քանիսն արդեն նվագում են նվագախմբերում: Որակյալ գործիքները ոչ միայն նրանց մասնագիտական աճի կարևոր պայման են, այլև կայունության ճանապարհին կարևոր հենարան:

Նշանակալի իրադարձություն եղավ 2025 թ. մայիսի 12-ին Զագրեբում (Խորվաթիա) բարեգործական համերգի անցկացումը, որը կազմակերպվել էր այս նախաձեռնության աջակցության համար: Հավաքված միջոցները ուղղվեցին արցախցի երիտասարդ երաժիշտների համար երաժշտական գործիքների ձեռքբերմանը: Համերգը կազմակերպվել էր Եվա Կիրխմայեր-Բիլիչի նախաձեռնությամբ՝ հայ-խորվաթական համայնքի աջակցությամբ:

Հավաքած միջոցների շնորհիվ 10-ամյա **Անուշ Աղաջանյանը** ստացավ իր երազած նվերը՝ նոր ջութակ: 2023 թ. բռնի տեղահանման ծանր օրերին, տունը լքելիս, Անուշն իր հետ վերցրել էր ամենաթանկը՝ իր ջութակը: Հայաստանում նա նոր մարտահրավերի առջև կանգնեց. մեծանալուն զուգահեռ նա արդեն կարիք ուներ իր տարիքին համապատասխան գործիքի:

«Ակուստիկա» երաժշտական գործիքների խանութում Անուշը փայլող աչքերով խոստովանեց.

«Հիմա նորից հավատում եմ, որ կկարողանամ հասնել իմ երազանքին: Շնորհակալ եմ բոլորին, ովքեր օգնում են ինձ դրա համար»:

Հայ-խորվաթական միության փոխնախագահ, Զագրեբի երաժշտական ակադեմիայի դասախոս, պրոֆեսոր Եվա Կիրխմայեր-Բիլիչի և բարերար Մասիս Առաքելյանի, ինչպես նաև մեր այլ բարեկամների աջակցությամբ գործակալությունը շարունակում է ծրագրի այլ երեք մասնակիցների համար գործիքներ ձեռք բերելու աշխատանքները:

«Մեր երեխաների համար երաժշտությունը ոչ միայն զգացմունքների արտահայտում է, այլև անցյալի և ապագայի միջև կամուրջ: Այս ծրագրի շնորհիվ նրանք նորից հնարավորություն ունեն հավատալ իրենց ուժերին և իրենց կոչմանը:»

Նարինե Աղաբալյան, *ծրագրի համակարգող*

Մենք խորին շնորհակալություն ենք հայտնում Հովարդ Կարագյոզյան հիմնադրամին, Մասիս Առաքելյանին և Եվա Կիրխմայեր-Բիլիչին՝ նրանց առատաձեռն աջակցության համար: Նրանց շնորհիվ երաժշտությունը, հույսը և ոգեշնչումը շարունակում են ապրել արցախցի երիտասարդ երաժիշտների սրտերում:

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԱՄՐԱՊՆԴՈՒՄ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ

2025 թվականի առաջին կիսամյակում իր ծրագրային գործունեությանը զուգահեռ՝ «Մենք ենք մեր սարերը» զարգացման գործակալությունը ուշադրությունը կենտրոնացրել է ինստիտուցիոնալ ամրապնդման, միջազգային ներկայացվածության և հանրային նշանակություն ունեցող նախաձեռնություններին մասնակցության վրա:

Ինստիտուցիոնալ կարողությունների ամրապնդում

Near East Foundation կազմակերպության STRIVE ծրագրի դրամաշնորհի շնորհիվ գործակալությունը էականորեն ընդլայնել է իր հաղորդակցային և ներկայացուցչական հնարավորությունները: Ծրագրի շրջանակում մշակվել են կազմակերպության գործունեությունը ներկայացնող մուլտիմեդիա նյութեր, ինչպես նաև արդիականացվել է պաշտոնական կայքը, որը այժմ գործում է չորս լեզվով՝ հայերեն, անգլերեն, ռուսերեն և ֆրանսերեն:

Հատուկ ուշադրություն է դարձվել թվային առաջխաղացմանը. մշակվել է մեկ տարվա SMM ռազմավարություն, որն ընդգրկում է սոցիալական ցանցերում համակարգված աշխատանք, բովանդակության պլանավորում, տեսողական ինքնության ուժեղացում և նոր լսարանների ներգրավում:

Մեր գործունեության լայն ներկայացման նպատակով ստեղծվել է կարճ վավերագրական ֆիլմ գործակալության մասին՝ ցույց տալով հիմնական ուղղությունները, արժեքները և ստեղծման պատմությունը: Բացի այդ, պատրաստվել է հինգ տեսանյութ առանձին ծրագրերի մասին՝ շեշտադրելով մասնակիցների իրական պատմությունները, ձեռքբերումները և տեղական համայնքների վրա ազդեցությունը: Այս նյութերն արդեն օգտագործվում են ինչպես հանրային հաղորդակցության, այնպես էլ գործակալությունը պոտենցիալ գործընկերներին և նվիրատուներին ներկայացնելիս:

Առցանց հաղորդակցություն և սոցիալական մեդիայում ներկայություն

2025 թվականի հունվար-հունիս ամիսներին «Մենք ենք մեր սարերը» զարգացման գործակալությունը շարունակել է ակտիվ ներկայություն ապահովել թվային հարթակներում, ինչը կարևոր գործիք է եղել համայնքների հետ հաղորդակցության և ծրագրերի մասին տեղեկացվածության բարձրացման համար: Հիմնական շեշտը դրվել է օրգանական (ոչ վճարովի) հասանելիության վրա:

Facebook-ը շարունակել է մնալ տեղեկատվության տարածման և լսարանի ներգրավման հիմնական հարթակը: Կիսամյակի ընթացքում արձանագրվել է.

- Էջի դիտումների ընդհանուր թիվ՝ **563 682** (աճ՝ 172%՝ նախորդ կիսամյակի համեմատ)
- Ներգրավվածություն՝ **11 962** (գրեթե եռակի աճ)
- Նոր հետևորդներ՝ **+814**, էջի ընդհանուր հետևորդների թիվը՝ **20 153**

Ամենաարդյունավետ բովանդակությունը լուսանկարային հաշվետվություններն են եղել, սակայն կարճ տեսանյութերը (reels) նույնպես ցուցադրել են ներգրավման բարձր պոտենցիալ:

LinkedIn-ի հարթակում արձանագրվել է զգալի աճ՝

- Էջի դիտումների թիվը հասել է **44 953** (աճ՝ ավելի քան 11 անգամ)
- Հետևորդների աճը եղել է ամբողջությամբ օրգանական
- Ներգրավման բարձրագույն ցուցանիշը գրանցվել է մարտին՝ Ռուբեն Վարդանյանին նվիրված աջակցության արշավի ժամանակ

Instagram, Telegram և **YouTube** հարթակները դեռևս պասիվ են, սակայն վերլուծական տվյալները ցույց են տալիս դրական միտումներ: Առաջիկայում ծրագրվում է կենտրոնանալ բովանդակության որակի բարձրացման, պարբերականության ապահովման և նոր լսարանների ներգրավման վրա:

Միջազգային մեդիայի ուշադրությունը գործակալության գործունեության հանդեպ

2025 թ. գարնանը ֆրանսիական **Le Figaro** օրաթերթը հրապարակեց հոդված Արցախի մասին, որտեղ անդրադարձ կատարվեց նաև «Մենք ենք մեր սարերը» զարգացման գործակալության գործունեությանը: Հոդվածում ներկայացվեցին գործակալության հիմնական մարդասիրական և կրթական նախաձեռնությունները, ներառյալ «Թևեր» ծրագիրը, երիտասարդ երաժիշտների աջակցությունը և ոչ նյութական ժառանգության պահպանման ծրագիրը: Հատուկ ուշադրություն էր դարձվել այն մարդասիրական առաքելությանը, որը իրականացնում է կազմակերպությունը՝ տասնյակ հազարավոր մարդկանց բռնի տեղահանման պայմաններում:

Մենք շնորհակալություն ենք հայտնում **Le Figaro** խմբագրությանը՝ բարդ իրավիճակի օբյեկտիվ լուսաբանման և մեր գործունեության հանդեպ ցուցաբերած հետաքրքրության համար: Նման հրապարակումները նպաստում են միջազգային իրազեկվածության բարձրացմանն ու Արցախի ժողովրդի հետ համերաշխության ամրապնդմանը:

Մասնակցություն փորձագիտական քննարկումներին

Հունիսին գործակալության թիմը մասնակցեց «Կայուն զարգացում՝ Արցախից հարկադիր տեղահանվածների համար. ապագայի հնարավորություններ» խորագրով համաժողովին, որը կազմակերպել էին AGBU-ն և HEKS/EPER-ը: Գործակալության սոցիալական ծրագրերի ղեկավար Արմեն Մանգասարյանը հանդես եկավ զեկույցով՝ մատչելի բնակարանային և տեղահանվածների տնտեսական կայունության մասին:

«Մենք կարևորում ենք նման հարթակները, որոնք թույլ են տալիս ոչ միայն փորձ փոխանակել, այլև գտնել ամենասուր խնդիրների համատեղ լուծման ուղիները», – նշեց նա:

Հուլիսին գործակալության փոխտնօրեն Նարինե Աղաբալյանը մասնակցեց «Արվեստի ձայն» համաժողովին: Քննարկման նպատակն էր բացահայտել առկա մարտահրավերները, մշակութային գործիչների կարիքները և ձևավորել Արցախի մշակութային ժառանգության պահպանման և շարունակության տեսլական: «Արցախի ձայնը արվեստում» թեմայով պանելային քննարկման ընթացքում Ն. Աղաբալյանը պատմեց տեղահանման պայմաններում մշակութային ինքնարտահայտման մարտահրավերների և ուժի մասին:

«Գոյություն ուներ Արցախի մշակութային համակարգ, որը քանդվեց մեկ գիշերվա ընթացքում: Մշակույթի մարդիկ այսօր ցրված են, շատերը՝ արդեն արտագաղթել են Հայաստանից: Սակայն նրանք մնում են մշակութային հիշողության կրողներ: Նրանց պետք է վերապահվեր նոր առաքելություն՝ բացահայտելու և ներկայացնելու Արցախի մշակութային ինքնությունը և ապահովելու դրա փոխանցումը նոր սերունդներին: Դա, սակայն, տեղի չունեցավ», – Ն. Աղաբալյան:

ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԸ ԹՎԵՐՈՎ ԵՎ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

2025 թվականի առաջին կիսամյակում «Մենք ենք մեր սարերը» զարգացման գործակալությունը, գործընկերների հետ համատեղ, իրականացրել է ծրագրեր և նախաձեռնություններ՝ ընդհանուր ավելի քան 188,000 ԱՄՆ դոլար արժողությամբ (տես աղյուսակը)՝ ազդեցություն ունենալով շուրջ 8,500 մարդու կյանքի վրա Հայաստանի տարբեր մարզերում:

ԾՐԱԳԻՐ	ԱՄՆ դոլար	ՏԵՂԱՆՔԸ	ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆ	ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ԹԻՎԸ	ԱՅԴ ԹՎՈՒՄ ՈՒՂՂԱԿԻ ՇԱՀԱՌՈՒՆԵՐ
«ԹԵՎԵՐ» ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ ԱՐՑԱԽԻՑ ԲԴՆԻ ՏԵՂԱՀԱՆՎԱԾ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԵՎ ՆՐԱՆՑ ԾՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ	**79 861**	Դիլիջան, Գյումրի, Երևան, Տաթև, Կապան	դեկտեմբեր-մարտ, հունվար-ապրիլ, մարտ-հունիս, ապրիլ-հուլիս, մայիս-օգոստոս	**1,020**	**255**
«ԹԵՎԵՐ՝ ԲՈԼՈՐԻՆ»: ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆԸ ՏԱԹԵՎԻ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԱՊԱԳԱՅԻ ՇԱՐԺԻՉ ՈՒԺ	**8 923**	Տաթև	ապրիլ-հոկտեմբեր	**224**	**56**
«TATEV CAVE GARDEN»: ՆՈՐ ՇՈՒԿԱ ՏԱԹԵՎՈՒՄ	**11 597**	Տաթև	2025-2026թթ.	**5 000**	**200**
«ԿԵՆԱՑ ԾԱՌ» ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆ: ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹՅՈՒՆ ՏԱԹԵՎԻ ՎԱՆՔ	**64 306**	Տաթև	մայիս	**2 000**	**2 000**
«ՊԱՀՊԱՆԵԼՈՎ ԱՐՑԱԽԸ»: ԱՐՑԱԽԻ ՈՉ ՆՅՈՒԹԱԿԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՐԹԱԿ	**9 557**	Web-տարածք	հունվար-հոկտեմբեր		
ՖՐԱՆՍԵՐԵՆ՝ ԱՐՑԱԽՑԻ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ	**2 951**	Երևան	մարտ-հունիս	**90**	**25**
ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԱՐՑԱԽԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԵՐԱԺԻՇՏՆԵՐԻՆ	**4 779**	Երևան	2025թ.	**108**	**23**
ԱՅԼ ԾՐԱԳՐԵՐ	**2 914**				
ԻՆՍՏԻՏՈՒՏԻՈՆԱԼ ԱՄՐԱՊՆԴՈՒՄ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ	**3 894**				
ԸՆԴԱՄԵՆԸ	**188 782**			**8 424**	**2 559**

Ամբողջ աշխատանքը կատարվել է շնորհիվ գործակալության համախոհների (գործընկերների, նվիրատուների) լայն շրջանակի ֆինանսական նվիրատվությունների կամ նյութատեխնիկական աջակցության՝ բազմաթիվ երկրներից՝ Ավետ Միրաքյան և «Արև» կրթա-սոցիալական բարեգործական հիմնադրամ, Գևիկ Բաղդասարյան, Saint Sarkis Charity Trust (Մեծ Բրիտանիա), Սատար Արցախին միություն (Ֆրանսիա), «ԴԱՐ» կրթության աջակցության բարեգործական հիմնադրամ (Ռուսաստան), Հ. Հովնանյան ընտանեկան հիմնադրամ, «Ազնավուր» հիմնադրամ, Հայ օգնության միություն (ARS), Հայկական բարեգործական ընդհանուր միություն (AGBU), Հայաստանի զարգացման նախաձեռնությունների IDeA բարեգործական հիմնադրամ, Մասիս Առաքելյան, Հովարդ Կարագյոզյան հիմնադրամ և շատ ուրիշներ (ցանկը կցված է):

Մենք անկեղծ երախտագիտություն ենք հայտնում Ռուբեն Վարդանյանի ընտանիքին՝ «Մենք ենք մեր սարերը» զարգացման գործակալությանն այս բարդ ժամանակահատվածում ցուցաբերված անգնահատելի աջակցության համար:

2025 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ԾՐԱԳՐԵՐԻ ՆՎԻՐԱՏՈՒՆԵՐ

Ազնավուր հիմնադրամ

Արաքս Առաքելյան

Արև կրթական-սոցիալական բարեգործական հիմնադրամ

Արմեն Վաչենանց

Արտաշես Կազախեցյան

Գայանե Կիրնոսովա

Գառնիկ Մելիքսեթյան

Գևիկ Բաղդասարյան

Գոռ Նահապետյան

ԴԱՐ կրթության խթանման բարեգործական հիմնադրամ

Դենիս (ազգանունը նշված չէ)

Դենիս Վասիլենկո

Ելենա Մակարովա

Եվա Կիրխմայեր Բիլիչ

Եվգենիա Պատուրյան

Էմիլ Գրիգորյանի անվան Երևանի ոսկերչական գործարան ԲԲԸ

Ժասմին (ազգանունը նշված չէ)

Ժորժիկ Անջարգոլյան

Լաուրա Ծահնազարյան

Լուսինե Ավանեսյան

Հ. Հովնանյան ընտանեկան հիմնադրամ

Հայ օգնության միություն

Հայկ Պետրոսյան

Հայկական բարեգործական ընդհանուր միություն

Հովարդ Կարագյոզյան հիմնադրամ

Մասիս Առաքելյան

Մարիա Ժոգ

Մարինա Հովհաննիսյան

Միխայիլ Այանյան

Յուրի Բալույան

Նիյր իսթ ֆաունդեյշն Արմենիա

Սատար Արցախին Միություն

Սենթ Սարգիս բարեգործական հիմնադրամ

Սերգեյ (ազգանունը նշված չէ)

Սերգեյ Ֆիլիմոնով

Վասիլի Բարդադիմով

Տատյանա Լոպարյովա

Օրրան բարեգործական ՀԿ

Մենք սրտանց շնորհակալություն ենք հայտնում բոլոր նվիրատուներին՝ ցուցաբերած աջակցության համար, ինչպես նաև մեր գործընկերներին և համախոհներին, որոնց ջանքերի վրա է հիմնված մեր ձեռքբերումները: